ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Արդեն երկրորդ տարին է, ինչ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը տարվա նախավերջին օրն այցելում է հայրենիքի քաջարի պաշտպաններին, իր հայրական պատգամ-հորդորներով, խրատ-խորհուրդներով խրախուսում, ոգևորում նրանց, ոգեշնչում մեր նախնյաց հերոսամարտերի ուսանելի օրինակով:

Որպես մի գեղեցիկ ավանդույթ, այս տարի ևս դեկտեմբերի 30-ը Նորին Սրբությունն անցկացրեց Հայոց աշխարհի նվիրյալ գավակների՝ զինվորների հետ:

Օրվա երկրորդ կեսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը:

Հակիրճ առանձնազրույցից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանն ուղղվեցին դեպի Արմավիր քաղաքում գտնվող ռազմա-ուսումնական կենտրոն:

Հանդիպման պահին

Նորին Սրբությանն ընկերակցում էին գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը, հոգեշնորհ Տ. Փառեն վարդապետ Ավետիքյանը, հոգեշնորհ Տ. Վրթանես վարդապետ Աբրահամյանը, գավազանակիր հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը, բարեշնորհ սարկավագներ:

Ռազմա-ուսումնական կենտրոնում բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին ՀՀ պաշտպանության փոխնախարար գեներալ-մայոր Աստվածատուր Պետրոսյանը,

ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական պատրաստականության վարչության պետ գեներալ-մայոր Մուրադ Սարգսյանը, ռազմա-ուսումնական կենտրոնի հրամանատար գնդապետ Մուրադ Կիրակոսյանը, ինչպես նաև ուսումնական զորամասի սպայական կազմը:

Հյուրերին առաջնորդելով դեպի զորամաս՝ մոտիկից ծանոթացրեցին տարածքին, ուսումնական ծրագրերին: Որից հետո, ազդանշանային հատուկ հրահանգով, շքերթային հրապարակում հավաքվեցին ուսումնական զորամասի զինծառայողները:

Այնուհետև ռազմա-ուսումնական կենտրոնի հրամանատար գնդապետ Մուրադ Կիրակոսյանը զեկույց տվեց Ամենայն Հայոց Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը և Պաշտպանության նախարարը զինվորական հոսպիտալում

Ամանորի նախօրեին հայրենիքի պաշտպաններին իր բարեմաղթանքի խոսքերն ասաց ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը՝ առանձնակի շեշտելով, որ հետևում են մնացել հայրենիքի պաշտպանների համար այնքա՜ն դժվարին ու անհաղթահարելի թվացող օրերը: Այսօր արդեն վերածաղկումի, վերազարթոնքի և նոր հորիզոնների նվաճման ժամանակներ են, որոնց արգասավոր արտահայտությունը խաղաղության պահպանումն է: *«Թող այն հարատևի, իսկ դուք եղեք միմիայն խաղաղության զինվորներ»*:

Զինվորներին հղած իր հայրական պատգամում Ամենայան Հայոց Հայրապետը շեշտեց զինվորի վեհ ու առաքինի կոչումը, մեր հայրերից ու պապերից մեզ ավանդված պատգամների անկորնչելիությունը: Միայն Հայրենիքի քաջ պաշտպանների սուրբ հիշատակն ու նրանց վարած հերոսամարտերի անմահությունը կարող են նշմարիտ օրինակ լինել այսօրվա զինվորին:

***

Ապա Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց զինվորական փոքրիկ շքերթը: Զինվորների տողանցից հետո, Նորին Սրբությունը առավել մանրամասն ծանոթացավ զինվորների մարտական պատրաստվածությանը, նրանց կատարած զինավարժությունների վարպետությանը:

Հավարտ զինավարժական արարողության, Գարեգին Ա Կաթողիկոսն իր ընկերակիցներով առաջնորդվեց հրամանատարի առանձնասենյակ, ուր տեղի ունեցավ մտերմիկ զրույց:

***

Այստեղից Նորին Սուրբ Օծությունն իր ընկերակիցներով ուղղվեց դեպի Երևան՝ այցելելու կենտրոնական ռազմական հոսպիտալ:

Հենց մուտքի մոտ պատվարժան հյուրերին դիմավորեցին ավանդական աղ ու հացով, որից հետո եղան հոսպիտալի մատուռում, ուր իրենց աղոթքն են երկինք առաքում եիվանդ զինվորները, եիվանդապահները ու զինվորների մերձավորները: Ապա ամենքը շրջեցին եիվանդասենյակներով, հանդիպումներ և փոքրիկ զրույցներ ունեցան ծանր վիրահատություն տարած զինվորների հետ, ինչպես նաև լուսանկարվեցին:

Վեհափառ Տերը վիրավոր մարտիկներին հանձնեց Ամենորի նվերներ և փոքրիկ աղոթքներ, հորդորեց աղոթել դժվարին պահերին, մաղթեց նրանց շուտափույթ ապաքինում, որպեսզի, համալրելով իրենց ընկերների շարքերը, այս կերպ առավել զորացնեն մեր վերանկախ ու ազատ հայրենիքը:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ